



# ԲԱԶՄԱՎԷՊ

ՌՅԺԴ • 1864 — ՓՍԱՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ • — ԴԵԿՏԵՄԲԵՐ

## ԱՏՏԻԿԵԱՆ ՄԵՂՈՒ Ի ԶԻՒՆԵՂԷՆ ԼԵՐԻՆՍ ՀԱՅՈՑ

( Շարունակութիւն • էջ 521 : )

Առջի հանդիպած գեողաւանէն 30 մղոն այլ վեր ելնելով՝ երկու օրուան ճամբով Տիգրիս գետոյն մէկ աղբերակին հասան, որ ինծի կ'երևի նոյն իսկ Բաղիշու գետն, և ասկէց բռնեցին Մշոյ ճամբան Ռահվայի ձորէն. և հասան Տաւրոնոյ գեղեցիկ և գիւղաշատ դաշտը, որոյ Մեղրագետն կամ Մեղուայ գետն կարծուի-Քսենոփոնի Տելքոսաւկոյածն: Այս կողմն այն ատեն Արևմտեան Հայաստան կ'ըսուէր, և կողմնակալն էր Տիւրիբազ, Պարսից թագաւորին շատ սիրելի, որ միայն համարձակութիւն ունէր անոր ձիհեծնելու ատեն ձեռքը բռնելու. ասիկայ հեծելազօրօք Յունաց դիմաց ելաւ, բայց խաղաղութեան պայման դրաւ որ առանց գեղերուն վնասելու անցնին իրեն սահմաններէն, և ուղածնուն չափ պաշար առնուն: Բայց ապահովութեան համար ինքն այլ հեծելովքն քիչ

հեռուէն Յունաց ետեւէն կ'երթար, ինչուան որ անոնք ուրիշ գաւառ մը հասան (որ թուի Հաշտեանք), ուր արքունի կամ իշխանանիստ ապարանք և շատ գեղեր կային: Բնակչաց բարեկամական կերպն, անօթութիւնն և ձիւնախառն ցուրտն համարձակեցուցին զՅոյնս խումբ խումբ բաժնուելու գեղերուն մէջ, և առատապէս վայելելու համեղ կերակուր, արմոիք, չամիչ և հոտաւէտ գինի մը. կու մնար անոյշ քուն մ'այլ քաշել. բայց իրենց պահնակներն զրոյց բերին՝ թէ զօրաց շարժմունք և խարոյկք (կրակ) կու տեսնեն. մէկէն ղէնքերնին առին դուրս վաղեցին և բանակեցան բաց օդոյ տակ. որ ձիւնով ու ցրտով ծեծեց ծածկեց զանոնք, և թերևս սառէին այլ, եթէ Քսենոփոն օրինակ չտայր փայտ ժողվելու կրակ վառելու. և եղով (թէ սուսամի, թէ ուետ



նի) և ճարպով օծուելու. բարեբաղդաբար՝ թշնամեաց վտանգն մերձաւոր չըլլալով՝ նորէն քաշուեցան ՚ի գեղերը, դուրսը բանքեր և զիշերապահ թողլով: Ասոնք Պարսիկ կամ Հայ աղեղնաւոր մը բռնեցին բերին զօրավարաց, և իմացան անկէ՝ որ Տիրիբազ իրենց անցնելու լերան ճամբան բռներ է. — ինչ լեռնանցք էր այս, յայտնի չէ. որովհետեւ ինչուան հիմայ այլ այս կողմերս լաւ ծանօթ չեն աշխարհագրաց և ճամբորդաց. բայց կ'երեւի կինճ ըսուած վիճակին կողմերը: Յոյնք ամենէն ապահով փորձը սեպեցին շուտ և շիտակ նոյն լերան վրայ վազելը, յանկարծակի բերելով զՏիրիբազ, և յաջողեցան այլ. զիմացնին երածը զարկին փախուցին, 30 ձի բռնեցին, Տիրիբազայ վրանն այլ ձեռուրնին ընկաւ, անոր արծաթոտիկ անկողնովը և կարասեօք:

Երկրորդ օրն այլ ձիւնի տակ քալելով և դարվեր ելնելով հասան այն բարձրաւանդակը՝ ուր Տիրիբազ բանակեր էր առջի օրը. անկէ այլ իրեք օթեւան ըրին անշէն և ձիւնապատ լեռնադաշտաց վրայ, ինչուան որ հասան յԱրածանի գետ (յարեւելեան Եփրատ), զոր և անցան ծանծաղ տեղէ մը, ուր ջուրն ինչուան գօտինին հասնէր. զարմանք է որ սառած այլ չէր, վասն զի գեկտեմբերի կէսն էր. ապա կ'երեւի թէ Արածանուոյ սաստիկ և նեղուցէ վաղած տեղերուն մօտ էր անցքերնին ճապաղըրոյ մօտերը, և ոչ շատ հեռու Պինկէօլ լեռներէն: Ասկից այլ դար վեր սկսան ելնել Հայոց բարձրագոյն տափարակները, և երեք չորս օր շատ դժարութեամբ 50 միլնի չափ կրցան երթալ ձեան և սառամանեաց միջէն: Բայց վերջի օրն և զիշերը (որ կ'երեւի թէ խնուայ 5000 ոտք և աւելի բարձր լեռնադաշտին վրայ էին) շատ նեղեցան և վտանգեցան. հին ձեան վրայ սաստիկ ցուրտ հիւսիսային հովով սկսաւ առատ տեղալ նոր ձիւն, որ գրեթէ մարդաչափ բարձրացաւ գետնին երեսէն, ամեն ճամբու հետք ծածկեց ջրն. խեղճ Հելլենացիք յուսահատեալ

ձիւնածած բքախեղդ կ'ըլլային, ոչ առաջ և ոչ ետեւ երթալ կրնալով. ոմանք ոտքի վրայ, ոմանք ՚ի գետին փռուած՝ բոլորովին ճերմըկեցեր, և սառելու փառնալու վտանգի մէջ էին. փուճ տեղ զոհեր կ'ընէին հողմոց հիւսիսահայոց, որ չհասկըցան Հելլենաց լայն ու լեզուն. Մոսկուայէն դարձող նաբոլէոնեան բանակին սոսկալի և սրբտակտուր տեսարանքն 2200 տարի առաջ հանդիպեցան և նկարեցան հոս Հարբայ բարձրաւանդակին վրայ, ուր Հայկն մեր նախահայր իր տիրական տունը հաստատուել էր, և ՚ի Բելայ նախատուել, թէ « Բնակեցար ՚ի մէջ ցըրտութեան սառամանեաց ». սակայն այն ցրտերուն վարժելով մեր Հայկն և իր նման Հայկազունքն՝ կրցան օտարաց դէմ կենալ և Բաբելոնի ու Նինուէի ջերարեակներէն աւելի զաւակ թողուլ մինչև ՚ի մեզ: Անվարժ Յոյնք մահուան և կենաց միջակուսին՝ ամեն կարելի հնարք ըրին, ոմանք շարժելով, ոմանք քիչ մը դտած փայտերնին վառելով, և ոմանք այլ բոլորովին անշարժ մնալով. զորս ոչ տաքցրնել կրցաւ և ոչ վեր կանգնել առաւօտուն պայծառ բայց վատոյժ արևն. դրաստուց մեծ մասն սառեր ճաթեր սև ժայռերու պէս ցցուել էին ձիւնադաշտին մէջ. կտրիճ զինուորներէն 30 հոգի և հասարակ կամ ծառայական մարդկանցմէ աւելի շատոնք մեռեր սառել էին. ոչ քիչերն այլ կիսամեռ և կիսաշարժ կու ջանային պակասած կեանքերնին վաստըկելու. ոմանց աչքն կուրցեր էր պաղ հովէն բքէն և ձիւնէն, ոմանց ոտքերն ճաթուած, ոմանց այլ կէս մարմիննին փատցած: Վերջապէս առաւօտն ոչ միայն լուսատու այլ և յուսատու է. սկսաւ շարժիլ մեռելակերպ բանակն, մանաւանդ թէ գերեզմանակերպ, թմրած ու ճերմըկեցած. բայց շատերն հազիւ քանի մը քայլակոխ ըրած գլորէին ՚ի գետին, նոր հիւանդութեամբ մը բռնուած, զոր պոռչիւնիւ կոչէին, անօթութեան և տկարութեան հետեանք. որոյ գեղն էր կերակուր և տաքնալ. բայց հազիւ թէ նոյն



իրիկուն կրցան դռնել զայս, այն այլ ոչ ամենքն: Քիրիստոփ յառաջագէմն իր գընդոյն հասաւ գեղ մը, որոյ պատին քով աղբիւրէ մը ջուր կ'առնուին աղջկունք. զասոնք խաբելով ըսին որ Պարսից թաղաւորին կողմէն կու գան առ նախարարն և մտան գեղը հանգչելու: Իսկ մեր խղճալի Մեղուն այն օրն այլ չատ չար չարութեցաւ իր վերջագնդովը, և շատերը թողուց ձեան վրայ, որ կամ ցրտէն և հիւանդութենէ մեռան, և կամ թըշնամիներէ զարնուած, որք և խեղճերուն ողջ մնացած զրաստներն այլ յափշտակէին. ինչուան որ տառապեալքն հեռուէն տեսնելով սև գետին մը՝ ձիւնը հալած կարծեցին և հոն վազեցին. և գտան շոգելից ջերմուկ մը, որ 'ի հարկէ քովի ձիւնը կը հալէր և հողն յերևան հանէր: Հաւանօրէն այս ջերմուկս պիտի ըլլայ Բասենոյ գաշտին հարաւաւ կողման լերանց վրայ, ուր իջան Յոյնք, (որպէս թուի Դեղթափ և Չէքմէ ? լեռանց միջոց լեռնանցքէն): Տաքը տեսնելուն պէս ցրտահար և անօթի գունդն փռուեցաւ ջրին եզերքը. «Բասենոփոն» որ լաւ գիտէր անոր վնասը, ամենայն հընարքով յորդորեց, վախցուց, սպառնացաւ, բայց չկրցաւ քշել շատերը, որք՝ Սպաններու այլ ըլլաա՝ ասկէ չենք չարժիր, ըսին, նստան: Եւ ահա մեր նախնի հարց չարաճճիկ լաճերնուն և Պարսից նետերն սկսան վրանին թափիլ փոխան ձեան. այն ատեն կտրիճներն յուսահատաբար ելան վազեցին ասոնց վրայ, իսկ տկարքն միայն գէնքերնին վահաններուն զարնելով վախցնել ջանային: Այս փորձս Բասենոփոնի խրատներէն ազդու եղաւ. սկսան շարժիլ ու առաջ երթալ. և քիչ մ'որ հեռացան՝ իրենց մէ առաջ հասնող դնդի մը հանգիպեցան, որ հոն փռուեր վերարկուններնուն տակ ծածկուեր էին. զասոնք այլ քաջալերելով և խիստ տկարները ուրիշներուն թևով քշելով կամ կրելով՝ գէպ 'ի գեղերը ուղղեց. նոյն միջոցին Քիրիստիէն այլ մարդ եկաւ, առաջնորդեց, և հասան մտան իրենք այլ չէնքի տակ, այլ և այլ գեղերու մէջ:

«Բասենոփոնի վիճակուած գեղին վրայ վազեցին Յունաց կտրիճք՝ Պոլիկրատ Աթենացոյ մ'առաջնորդութեամբ, և բռնեցին գեղին գլխաւորը (որ հիմայ մէլք կամ ոէս կ'ըսուի), և անոր նոր հարս աղջիկը, որուն փեսայն որսի գացեր էր, քանի մ'այլ աղէկ ձի, զոր հարկի տալու տեղ կու բռնանէին Հայք: Բասենոփոն գեղապետին սիրտ տալով վախը փարատեց, նա ալ պատուիրեց որ սիրով ընդունին այս անծանօթ հիւրերը՝ և ութ օր բարեկենդան մը ընել տուին՝ հողածածուկ և տաքուկ տնելուն մէջ, ուր անասունք կենդանի վառարան մ'էին թոնիրներէն զատ. առատ և տեսակ տեսակ մսեղէն կերակրոյ հետ գտան ընդեղեններ այլ, և պատուական զարեջուր ու գինի՝ գետնաթաղ կարասներու մէջ. ուր ուղողը կ'երթար եղեգ մը խոթէր և ծռած վեր քաշէր խըմէր: Այս Յունաց բարեկենդանին զրաւարճութիւնն այլ էին մեր Հայ մանչերն, որոց նորատեսակ հագուստն, մընչնակատակ ձևերն՝ նշանացի խօսելով, ծառայելու ատեն հաստու բարակ շարժմունքն՝ շատ ծիծաղի պատճառ եղաւ՝ Եւրիպիդեսայ և Արիստոփանի թատերաց առաջին ականատես եղող Հելլենաց: Շարաթ մը հանգչելէն ետև Բասենոփոն շատ շնորհակալութեամբ՝ ծեր ձի մը ընծայ ըրաւ գիւղապետին՝ որ արեգական զոհէ. գեռ արևապաշտ էր այն ատենուան մեր պապն՝ Բասենցի կամ Թէքմանցի ուէն. ուրիշ ընծաներ ալ տուաւ. բայց ինքն այլ առաւ երկու լաւ մտրուկ, իր սպայիցն այլ մէկ մէկ հատ տուաւ. ասոնք այն անուանի հայկական ձիոց քուռակներն էին՝ որ Պարսից թագաւորին ընծայ կ'երթային տարուէ տարի, իբրև 20000, կամ աւելի. պղտիկ քան զՊարսից ձիանն՝ այլ աշխոյժ և քալուկ: Հայ գեղապետն սովորեցուց Յունաց՝ որ ձիոց ոտքերուն տակ քսակ մը կապելու է՝ որ կարենան ձեան վրայ քայլել. եթէ այս բանս մեր նրբամիտ Աթենացիք առաջուց գիտնային՝ թերևս այնչափ կորուստ չէին ըներ լերանց վրայ: Փոխարէն այս բարի



խրատուն՝ անգութ սպարտացի զօրա-  
վարն Գիրիսոփ՝ իրեք օր ճամբայ ընե-  
լէն ետև յանիրաւի կասկածելով որ զիւ-  
ղապետն (զոր իրենց առաջնորդ առեր-  
էին) կամաւ անշէն տեղերէ կու տանի՝  
յանդիմանեց ու ծեծել տուաւ. որոյ հա-  
մար Քսենոփոն զժտեցաւ Գիրիսոփի  
հետ. մանաւանդ որ զեղպետն այլ զիւ-  
շերանց փախաւ տեղը դարձաւ. բայց  
իր մէկ որդին որ Յունաց քով էր՝ մը-  
նաց հոն, և վերջը յօժարութեամբ զը-  
նաց անոնց հետ՝ ի Յունաստան (յիւս-  
փիպօլիս, իրեն տիրոջ Եպիսթենեայ  
տուն՝ և միշտ հաւատարիմ մնաց. ի  
հարկէ աղէկ յունարէն այլ սովորելով։)

Բասենոյ ընդարձակ դաշտերուն մէջ  
եօթն օր թափառեցան Յոյնք, ինչուան  
որ հասան Երասխ գետ. զոր Քսենոփոն  
փասխ կոչէ յանուն Բասենոյ. հոս այլ  
չորս օր դադրեցան զիւղօրէից մէջ.  
ապա երան և անցնելով գետը՝ մտան  
Հանուռեաց և վանանդաց սահմաննե-  
րը, ընդ մէջ Տայոց և արևմտեան Գու-  
գարաց։ Այս երկու նահանգաց առջինը  
Յոյնք ստոյգ Տայք (Տաօք) կ'անուանեն.  
իսկ երկրորդին տեղ խալիշպք կամ  
խալտիք կ'ըսեն. որով յայտնի կ'ըլլայ  
այն ատեն խաղտեաց ազգին մեծութիւ-  
նը և ընդարձակ սահմանները. բայց մեր  
աշխարհագրութեաննայելով ասոնց հոս  
ըսած խալիւպքն՝ Արտահանի (Գուգա-  
րաց), կողայ (Տայոց) որ հիմայ այլ Կէօ-  
լէ կ'ըսուի՝ և Կարնոյ կողմերն իմանա-  
լու է։ Այս կողմերս կտրիճ լեռնաբնակք  
կային՝ որ իրենց անցքերը բռնելով հա-  
կառակեցան Յունաց. բայց անոնք վեր-  
ջապէս զիշերանց զոհ ընելով՝ առտուն  
իջան լեռներէն, (որ թուին Գիրէճլի կամ  
Գարկապազար ըսուածքն հիմայ) մտան  
Տայոց մացառոտ և ժայռոտ երկիրը.  
ուր շատ զժարաւ կրնային առաջ եր-  
թալ, մանաւանդ որ թշնամիք այլ ան-  
դադար լեռներէն քար ունետ թափէին  
վրանին՝ որոնց հետ անօթութիւնն այլ  
տանջէր զՅոյնս. մինչև որ հասան գե-  
ղերու և կրցան պաշար ճարել։ Անկից  
դէպ յարևմուտք երթալով (հաւանօ-  
րէն մեր Տայոց աշխարհին Պարտիկաց-

փոր, Բերդացիոր և ուրիշ փորակաւոր  
և ձորակաւոր դաւառաց միջէն) չորս  
օրէն հասան ընդարձակ ամուր տեղ մը,  
որ բնակութեան շէնք չունէր, և կ'երևայ  
թէ կամ Բահվայի կարաւանատանց պէս  
տեղ մ'էր, ուր կային բազմութիւն ա-  
րանց և կանանց հանդերձ անասնօք, և  
կամ մեծ վաճառատեղի մը. Յոյնք յար-  
ձակեցան այս ամրափակ տեղոյն վրայ,  
բայց վրանին անանկ քարէ կարկուտ  
մը իջաւ ի պաշարեալ Հայոց, որ յետ  
քաշուեցան. Քսենոփոն նորէն սիրտ  
տուաւ քիչ մ'այլ զիմանալու և շուտով  
զիմելու, վասն զի կարճ անցք մ'էր վը-  
տանդաւոր տեղն, և անկէ անդին ե-  
ղենեաց անտառ մը կարճ որ քարերուն  
դէմ պիտի կենար. քարերն այլ ան-  
հատնում չեն։ Այնպէս այլ եղաւ, Յոյնք  
վերջին յարձակմունքն ըրին, ի հարկէ ոչ  
անմիտս, բայց հասան մտան ներս։ Հոս  
սարսափելի և քիչ հանդիպած տեսա-  
րան մը բացուեցաւ երկու կողմին այլ.  
Տայք անճրկած և յուսահատած՝ բայց  
չուզելով վատութեամբ օտարաց ձեռքն  
ընկնիլ՝ կրցողն փախաւ. անկար կա-  
նայք կրցողներէն աւելի կրցան. կա-  
տաղեաց պէս այլակերպած, մաղերնին  
ցրուրտած, աչուրնին խոլոռած, փոխա-  
նակ քարի՝ սկսան մանր զաւկրնին օդուն  
մէջ պարսելով քարաձոր վհերու մէջ  
նետել, անոնց ետեւէն զիրենք այլ դա-  
հավիժելով անդարձ անդնդոց մէջ. բը-  
նական յանդգնութեամբ արք այլ նոյն-  
պէս ըրին. անանկ որ Յոյն մը անոնց  
զլխաւորներէն մէկը բռնել ուզելով՝ ա-  
նոր հետ մէկտեղ վհերուն մէջ փրթաւ  
ջախջախեցաւ։ Հազիւ քանի մը հողի  
կրցան բռնել Յոյնք, բայց շատ անա-  
սուն գտան և առին, էշ, ոչխար և կով.  
որ իրենց պիտանի եղան հետևեալ օ-  
րերուն, երբ խալիւբաց կամ խաղտեաց  
երկիրը մտան, որ թուի արևմտեան  
Տայք, կամ Թալուսկեարի (Բուն Տայ-  
ոց) և Թորթումայ կողմերը, գուցէ քիչ  
մ'այլ աւելի դէպ հիւսիս մոլորեցան.  
վասն զի իբրեւ 50 փարսախ (150 մղոն)  
ճամբայ ըրած կ'ըսուին այն երկիրը. ո-  
րոյ բնակիչք քան զՀայս և զՏայս աւե-



լի յանդուգն և բուռն էին, աղէկ այլ սպառազինուած. Սպարտացւոց նման այլ կարճ թրեր ունէին, որք քանի մը Յունաց գլուխներ իրենց ափը ձգեցին. իսկ միասայր նիզակներն՝ կորդուաց նըման 15 կանգնեայ էին անվախ կու գային պարելով երգելով թշնամեաց դէմ՝ գրգռելու, կամ իրենց ամուր գեղերուն մէջ պահուրտած յանկարծ կ'ենէին. իսկ եթէ հալածուէին 'ի Յունաց՝ աւելի ամուր տեղուանք կ'երթային, ուր որ իրենց պաշարներն այլ ապահովներ էին: Յոյնք շատ զգուշութեամբ և ոչ անվրտանգ ասոնց սահմաններէն խուսելով հասան 'ի գետ մը իբր 400 ոտք լայն զոր քանոփոն Արքաւոս, Դիողոր՝ Արքակ կոչէ. և որուն (առջինին) անուան նմանութենէն չենխղճեր քանի մը երևելի աշխարհագիրք, հիմկու այլազգեաց Արքա-սուշու գետն համարել, որ է մեր նախնեաց Ախուրեանն, և կ'անցնի 'ի դաշտէն Շիրակայ՝ Անիի քովէն: Այսչափ զՅոյնս դէպ յարեւել խոտորցընողք գուցէ կրնային ինչուան Սիւնեաց երկիրն այլ տանիլ, ուր բուն հայկական Արփա գետ մը կայ՝ 'ի վայոց-ձոր: Ոմանք այլ Ապսարոս գետը կարծեցին, բայց այն այլ Պոնտական լեռներէն անդին և ծովուն մօտ է. հաւանօրէն կամ թորթումայ գետն կամ նոյն իսկ անոր ջրերը ժողովող մեծ և ծանօթ Ճորոխ գետն էր Արքասոսն կամ Արքակն այն, որոյ առողած վերջին Տայոց գաւառն է Արսեաց-փոր, հիմկու կիսկիմայ և խոտովրոյ կողմերը, թէ և Յունաց տեսածին չափ լայն չեն:

Այս գետս անցնելով մտան Յոյնք 'ի դաշտս Սկիշքաց կամ՝ Սկիշքիւնեանց կամ՝ Սկուտիւնաց. որն այլ ըլլայ անունն՝ ուրիշ կողմէ յայտնի չէ. այլ հառարակաց հաւանութիւն է թէ ըլլայ կարնոյ դաշտն, որ հին ատեն չիշուիր մեր պատմութեան մէջ և հաւանօրէն ուրիշ անուն մ'ունէր: Իրեք օր այս դաշտիս մէջ քալելով հասան մեծ և բազմամարդ քաղաք մը՝ Գիւմնիսս կամ Գումնեսիսս ըսուած. զոր ոմանք նոյն իսկ էրզիւում քաղաքը կարծեն, այս

ինքն անոր տեղ եղած հին քաղաքը, (որ ըստ մեզ չկայր այլ). ոմանք այլ կարնոյ հարաւային արևմտեան ծայրը եղած Ճիւնիս գիւղը. ոմանք այլ այս անուան մերձաւորութեամբ կախարդուած՝ կարծեն զԿիւմիշիսսնէ, թէ և պատճառ՝ անոր արծաթահանքով ծանօթ ըլլալն զնեն: Այս գլխաւոր տեղն այլ դեռ վէճի տակ է. բայց կարնոյ, Սպերոյ և Բաբերդու միջոց ըլլալն շատ հաւանական է: Գումնիսսայ (թերևս Գոմուց) իշխանն՝ Յունաց մարդ խաւրեց և խոստացաւ զիրենք անվնաս հասցնելու իր թշնամեաց երկիրը, խնդրելով որ անոնք այլ այն թշնամի երկիրը այրեն ու աւրեն. առաջնորդ մ'այլ տրւաւ, որ խոստացաւ հինգ օրէն ցուցնել անոնց ցանկալի ծովը: Երկու կողմէն այլ խոստմունքներն կատարեցին. Յոյնք անցած տեղերնին այրելով աւրելով, որոյ համար իրենց ետեւէն ընկած բնակիչներն այլ հալածէին և անոնց ուռենիէ հիւսած վահանները իբրև յաղթանակ առին, զոր և առաջնորդնին ուրախութեամբ կու կոտորէր. ինքն այլ զանոնք հասուց մէկ սրբազան լեռ մը, ինչպէս կ'ըսեն Յոյնք, և անուանեն Թեքես, կամ Քենիոն ըստ Դիողորի. զոր հիմայ հնախոյրք կարծեն կոր լեռը, ընդ մէջ կարնոյ և Բաբերդու, ուսկից ճամբայ այլ կայ 8000 և աւելի ոտք բարձր է. սակայն եթէ Գիւմնիսս քաղաքն կարնոյ դաշտին արևմտակողմն էր՝ ինչուան 'ի կոր հնգօրեայ ճամբան խիստ շատ է. ասկէց այլ զծով տեսնել իբր 60 մղոն հեռուէն ամեն աչքի համար չէր: Յոյնք՝ գոհութեամբ առատապէս վարձատրեցին առաջնորդնին թէ ստակով և թէ զգեստով. բայց նա աւելի փափաղով ուզեց և առաւ անոնցմէ շատ մատանիներ ու դարձաւ:

Այնքան մեծ և անպատմելի եղաւ Յունաց ուրախութիւնն 'ի տեսնելն հեռուէն իրենց սեփական որորան համատարած աղի ջրերուն փայլուն մակերևոյթը, և այնքան մեծաձայն ծով ծով կանչէին, որ մօտ եղած գրաստներն խրտէին և չփոթէին, վերջապահ գունդն



և ամեն հեռի գտնուողը կարծեցին թէ թշնամիք չորս կողմն բռներ են և զէնքի վազեցին. բայց երբ իրենց դէմ ոչ հա- կառակող՝ այլ աւետաբեր տեսան, և կէս հաւտալով կէս անհաւատ լեռն 'ի վեր վազեցին և իրենք այլ տեսան ըզ- ծովն, ամենքն իրարու պլլուեցան, զօ- րավար և զինուոր, և շատերն ուրախու- թեան արցունք թափեցին երկար ա- տեն:...

Այսպէս ելան մեր հայրենի սահման- ներէն. պէտք է երթա՛ք բարով ըսե՛ք անոնց, Հայկակ, մերազգի առաջնոր- դին հետ ցուցընելով մօտաւոր գեղը և Մակրոնաց ազգին երկիրը և ճամբան. ուր որ հասան Յոյնք երեք օր թփոտ մացառոտ բլուրներէ իջնելով. անկէ այլ իրեք օրէն մօտան 'ի սահմանս կող- քեաց. անկէջ այլ երկու իրեք օրէն հա- սան 'ի Տրապիզոն, իրենց ազգակից գաղթականաց մէջ, և տարիէ մը վեր հեռացած և փափագած ծովուն եզեր- քը. ուր և մօտան յետ ամիս մը հանգ- չելու և բարեկենդան ընելու 'ի մեծի քաղաքին Պոնտոսի, ու նաւելով 'ի Սի- նոպ և ուրիշ ծովեզերեայ քաղաքներ, ապա քիչ մ'այլ ցամաքէն երթալով, իբր վերջի միաբան իջևանն ըրին 'ի Խրիւ- սոպօլիս, այսինքն 'ի Սկիւտար Բիւզան- դիոնի, օգոստոսի սկիզբը, և անկից ցրուեցան իրարմէ, Կիւրոսի հետ ճամ- բայ ելնելնէն տարի ու կէս ետե:

Կորդուաց լեռները և Հայոց հարա- լային սահմանները կոխած ատեննին, ինչպէս ըսի, նոյեմբերի կէսերն էր, իսկ Խաղտեաց լեռը ելած և ծովը տեսած ատեննին, 'ի հիւսիսային սահմանա- ծայր Հայոց, փետրուարի սկիզբն էր. ուրեմն երկու ամիս ու կէս ամենէն ցրը տագոյն եղանակին (Քրիստոսէ 404- 400 տարի առաջ) այս հռչակաւոր Բիւրն Յունաց գերահռչակ զօրավարի և պատմչի առաջնորդութեամբ կատա- րեց այս յաւերժայիշատակ նահանջը, անոր դժարութեան մեծագոյն մասը գտնելով մեր աշխարհին մէջ. ուր և զո- նէ հազար մը կամ հազարներ այն ծաղ- կահասակ Հելլենաց՝ ծածկեցան հիւսի-

սային սառամանեաց և հայկական հո- ղոյ մէջ, որ շատ օտարաց մարմին ընդու- ներ է՝ անոնց ինքնակամ գալովը՝ թըշ- նամութեամբ կամ մտերմութեամբ: Քսենոփոն որոշ թիւ չըսէր. սովորա- բար 10000 կ'ըսուին նահանջողը, այլ ըստ ոմանց 13000էն աւելի էին Կոր- ճայից սահմաններուն մօտ. Քսենոփոն՝ Տրապիզոնէն անդին 'ի Կերասոնտ (Քիւ- րէսուն) դեռ 8600 հոգի կու յիշէ. իսկ Դիոդոր Սիկիլիացի ինչուան յիւսկիւ- տար՝ տասն հազարէն միայն 3800 մնա- ցած կ'ըսէ: Մեր աշխարհին բարձր կլիւ մային և օտարաց անփորձ ցրտոյն հա- մեմատ, միանգամայն Պարսից թշնա- մութեամբն հալածուելով, եղած կո- րուստն՝ դեռ կրնայ քիչ ըսուիլ. և պէտք է ապրողը շնորհակալ ըլլան նախ ի- րենց փրկիսփայ վերջապահ զօրապե- տին, և ապա նոյն իսկ մեր հայրենա- կցաց, որը աւելի մարդասէր և հիւրըն- կալ եղան անոնց՝ քան իրենց սահմա- նակիցքն, Կորճայք, Տայք, Խաղտիք, և այլն. և եթէ Պարսից թագաւորի կող- մնակալքն չըլլային 'ի Հայս՝ աւելի հան- գիստ և դիւրին կ'ըլլար Յունաց Բիւ- րուն նահանջն: Զմեռուան համար այլ ըսելու է որ որչափ սաստիկ էր՝ դեռ սաստկագոյն տարիներուն մէկն չերևիր, այլ և մեղմագոյն. շատ տեղ՝ աղջկանց աղբիւրներէ ջուր հանելն (որ ուրիշ կող- մանէ կու յիշեցընէ մեզ նահապետա- կան Ռերեկաները և Ռաքեշները), կամ նաև միջակ գետոց (չսառած) միջէն անցնելին՝ այս բանս ճշմարտեն. ան- կէց զատ կու հաւաստէ նոյն պատմու- թիւնն թէ այն ատեն այսչափ մերկ չէր մեր երկրին երեսը, այլ աւելի ծառոտ և անտառոտ, որով ցրտին դէմ դնելու երկու ճար այլ կար, մէկ մը հովը ար- գելով կանաչասև կամ ճերմակապատ վարագուրով և պատուարաւ մայրեաց, մէկ մ'այլ անոնց ճղերով կրակ ընծայե- լով. յետագայ դարուց պատմութիւնքն այլ զայս ցուցընեն:

Ճանապարհորդաց մեծ միտթարու- թիւն մ'այլ էր բարեկամութեամբ ընդ- ունող գեղերու և գեղացեաց քով զտած



առատ պաշարներն, թէ մանդէն ( որոյ մէջ յիշուի խողենին այլ) թէ ընդեղէն և չոր պտուղ, ու մանաւանդ զօրաւոր դինի մը, զատ 'ի գարեջրէն. որք յայտնի նշանակեն թէ այն ատեն շատ աւելի բարեկեցիկ էին մեր զիւղացիք քան հիմայ և ուրիշ ատեններ. երբ այնքան փոփոխութեանց և հարստահարութեանց տակ չէին ընկած, այլ կամ իրենց բնիկ Հայկազն թագաւորաց կամ արևելից մեծ տիեզերակալին կանոնաւոր իշխանութեան տակն էին, միայն երբեմն զրացի ազգաց ասպատակութենէն նեղուէին, սակայն անոնց դէմ կենալու ոյժն այլ ունէին՝ հին Հայ երկրագործաց եղբարքն էին Հայ զինաւորք։ Իրենց թագաւորն այն ատեն հարկատու էր Պարսից, որք երկու մեծ կուսակալութիւն բաժնած էին զաշխարհն, յարևելեան և յարևմտեան. սակայն այս արդէլ չէր որ Հայկազն թոռն Տիգրանայ իր նախնեաց օրինօք չկառավարէր իր սեփական ազգը։ Հայաստանէ անցնող Յոյնք այլ բոլորովին անծանօթ չէին մերոնց, որք և սահմանակիցք կրնային ըսուիլ՝ փոքր Ասիոյ մէջ, ուր հազարով տարիներ առաջ մեր Արամ նահապետն երկու ազգերը մօտեցուց իրարու, և թե րևս այս առաջին անգամն չէր մերձուորութեան. իսկ յետ այնոր՝ շատ անգամ այլ զիրար ճանչցեր էին, սկսեալ 'ի կիսասուտ ուղեորութենէ Արգոնաւորդաց, մինչև յարշաւանս Դարեհի և Քսերքսեսի 'ի Յունաստան, որոց բանակաց մէջ կային հայկական զօնազք։ Բայց ասոնցմէ առաջ և քիչ ետք յԱրգոնաւորդաց, իբր 800 տարի նախ քան զՔսենոփոն և իր բիւրը, Բիւր մը Հայոց այլ կտրիճ հեծելոց քան հեռակաց՝ գնացին, թէ ոչ 'ի բուն կղզիականն Յունաստան, այլ ընդդէմ Յունաց. մինչև յարևմտեան ծագս փոքուն Ասիոյ, յԱրմաւրայ մինչև 'ի Տրովա, 18 աշխարհազորական աստիճանի երկայնութեամբ հեռի միջոց հորիզոնական ուղղութեամբ (զրեթէ նոյն լայնութեան աստիճանին տակ էին Պոլիամու և Զարմայրի մայրաքաղաքքն)։ Երբ այս ետքինս Ասորե-

ստանեայց Տևտամոս ինքնակալին կամօր գնաց յօգնութիւն որդէկոտոր ծեր թագաւորին Դարդանեանց, և 'ի վրէժ ըսպանմանն Եկատրի յոխերիմ զիւցաղնէն, թէ և ինքն այլ քաջութեամբն վիրաւորեալ ընկաւ հոն. « այլ յԱրելլեայ կամիմ և մի յայլ ումեքէ 'ի քաջացն »։ Բայց ուր մնաց մեր այն ժամու Քսենոփոնն՝ որ այս հայկական Բիւրուն անցքն ու դիպուածը ճառագրէր... և արդեօք չեմք ունեցեր, թէ ոչ Հոմերոս մը, գոնէ Դիկտիս մը և Դարեհ մը տրուական պատերազմաց պատմող։ Հիմայ ձեռուրնիս բան չկայ, և ոչ իսկ համբաւ այնքան հին ժամանակաց. — մինչդեռ մեր Քսենոփոն պատմութեամբ և աշխարհին ծանօթութիւնները կերպով մը բանեցընէ ոչ միայն այս նահանջիս գրոց մէջ, այլ նաև Կիւրամարզին։

Սակայն չեմ ուզեր անմիտութար լռել, Հայկակ. եթէ Քսենոփոնէն 800 տարի առաջ չունեցանք իրեն նմանը, իրմէ 800 տարի վերջ ունեցանք մէկ մը. այն ոսկեգիր և մեղրաբան մէկն՝ զոր ժամանակիս հայ գրականութիւնը նորոգող հարք և զայն յարգողք՝ անուանեցին Հայ Քսենոփոն. վարդանանց պատերազմին Պատմիչն։ Ո՛վ կարծէր թէ Քրիստոսէ չորս դար առաջ Ատտիկեցի մեղուն անցած Մոկաց լերանց սահմաններուն վրայ՝ պիտի գար Քրիստոսէ չորս հինգ դար ետե՛ իր քաղցրաթեղ կենաց հիւսուածը ամփոփելու՝ Արարատեան մեղուն ԵՂԻՇԷ. որ և ինքնին այս Քսենոփոնի անցած բարձր կոհակները՝ Չիւլեդէն յերիւք Հայոց՝ անուանողն է։ Ո՛վ կարծէր թէ մեր մեղուն այլ երբեմն Ատտիկեցւոյն նման զինակիր էր վարդանայ՝ մեծի և սիրելոյ քան զԿիւրոս և զՊրոքսեն։ Ո՛վ կարծէր թէ Եղիշէ այլ փոխանակ Քսենոփոնի՝ անոր հայրենիքը պիտի երթար՝ պարզ բանաւոր մեղրաբանութեան համար, և անոր Սոկրատ վարժապետին և բարեկամին տեղ պիտի ունենար Սահակ և Մեսրոպ մը 'ի Հայս, Կիւրեղ մը յԱղեքսանդրիա. — անոր լայնաճակատ ու լայնակունակ աշակերտակցին տեղ՝ Եղնակ մը, Դաւիթ



մը և Մովսէս (Խորենացի) ուսումնա-  
կից, որը Աթենայ հանճարը փոխադրե-  
ցին՝ ի Հայս: Մենք պէտք է հաւասար  
չնորհակալ ըլլանք մեր ազգակից Հայ  
հանճարեղ հարց այլ, հելլենացի վար-  
ժապետաց այլ. և եթէ աւելի պանծա-  
նօք քան Յոյնք զԲսենոփոն՝ պատուեմք  
զմերս արարատեան մեղու, դու այլ ո՛վ  
Ատտիկեցիդ (Փսենոփոն) անչնորհք  
մ'ըլլար եթէ անուանեմք զքեզ՝ ՅՈՅՆ  
ԵՂԻՇԷ:

Արդ այս բաւ է մեզի այլ քեզի այլ.  
դարձիր դու փութով քու հայրենիքդ՝  
պաշտպանելու հին վարպետդ, բարե-  
կամք և մարտակիցդ, Սոկրատը. ահա  
ծերունին քաշեն ի բանտ. ահա մոլե-  
խընդին մահաբեր բաժակը՝ ի ձեռքն է.  
եթէ չկրցար ազատել զնա յԱնիտո-  
սեանց, որպէս ոչ մերքս զՍահակ ի  
Սուրմակեանց, կամ՝ հին հաւատա-  
րիմքն՝ զՆերսէս և զՏրդատ, գրէ գոնէ  
անոր Պաշտպանութիւնը, որպէս Խորե-  
նացին զՈղբն, և Եղիշէ իր պատմու-  
թեան և միանձանց ճառին մէջ՝ սրտա-  
ռուչ յիշատակքն: Եւ եթէ դու այլ հա-  
լածուիս և պքսորուիս՝ քու նրբամիտ  
այլ և փոփոխամիտ քաղաքացիներէդ,  
ասով այլ Եղիշէի և ընկերակցացն հա-  
լածանաց և կամաւոր պքսորանաց կամ  
միայնութեան նման սեպուիս: Ա՛ռ դու  
այլ կորնթոսի օտարութեան և առանձ-  
նութեանդ մէջ մեղրածոր գրիչդ, և կիւ-  
րամարդի վիպասանութեանդ մէջ խառ-  
նէ ի Հայաստան և ի Հայոց լաժներդ  
իրենց դար մ'առաջ վախճանած սիրե-  
լի Տիգրանին վրայօք, և անոր պար-  
կեշտ ու խանդակաթ կողակցին նազա-  
բանութիւնը, հանդերձ քու Պանթէայ-  
իդ կեղծողներդակ պատմութեամբ.  
որոյ փոխանակ աւելի վսեմական փափ-  
կութեամբ մենք կարդանք մերազգի մե-  
ղուն գրուածը զփափկասուն Տիկնայց  
Հայոց աշխարհին և զկանանց կապե-  
լոց նախարարացն: Ի հարկէ չես մոռ-  
նար Տիգրանէն առաջ՝ անոր պէս Հայոց  
սիրելի եղած՝ իրենց գեղեցիկ և ողջա-  
խոհ նահապետին՝ Արայի՝ մահը և ա-  
ռասպելախառն յարութիւնը՝ պատմե-

լու քու քաղաքական վարչութեան կար-  
ծեացդ ընդդիմաբան, այլ և քեզմէ մեծ  
ու ճարտարաբան գրչին և իմաստասի-  
րի՝ Պղատոնին. որ անհաւան չէ թէ  
քեզմէ լաժ՝ այլափոխեալ պատմէ իր  
Հասարակապետութեան գրոց մէջ էր  
Հայկազին՝ դարձը ի մեռելոց և տե-  
սիւքը: Իսկ երբ ձիադարմանուքեան  
կամ ձեճեյուքեան վրայ գրես՝ անշուշտ  
չես մոռնար հայկական եռանդուն երի-  
վարները և քու սիրով առած մտրուկ-  
ներդ, և այն խնամքն՝ որով Հայք դար-  
մանէին զանոնք: Որսոց վրայ այլ գրած  
ատենդ, և մանաւանդ նապաստակին  
ճարտար նկարագրութեան ատեն՝ ան-  
շուշտ դեռ կու յիշես Հարքացի կամ  
Հանունի (կամ այլ Հայ գաւառի մը)  
գեղապետին փեսայն, որոյ իննօրեայ  
նոր հարսը գերած կամ պատանդ բռ-  
նած ատենդ, նա անգէտ եղածին՝ նա-  
պաստակ որսալու ելեր էր ի սառնա-  
պատ սարս Ձիւնեղէն լեռանցն Հայոց:  
Այսպէս քու զանազան գրոցդ մէջ՝  
յայտնի կամ ծածուկ խառնես մեր  
Հայաստան աշխարհի յիշատակները՝  
քու բանական մեղրդ գործելու. ինչ-  
պէս մերս Եղիշէ այլ իր ազգին վրայ  
գրած ատեն՝ քու հայրենեաց իմաստից  
ծաղկներովն հիւսէ իր քաղցրաբանու-  
թիւնը: Արդեօք ո՞րն աւելի անուշահամ  
է և պիտի ըլլայ մինչև իսպառ՝ ազգային  
ճաշակաց, Ատտիկեցիին իր Հելլենաց,  
թէ Այրարատեանն՝ մեզ Հայոց:

Հ. Ղ. Մ. ԱԼԻՇԱՆ

1 Ազգաւ Հայ և ծննդեամբ Պամփիլիացի կ'ը-  
սէ Պղատոն. տես ի Բազմավէպ ԺԴ. էջ 341: